Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Խ. ՇԱՀՄԱԶ ԵՍԻ

ՉԱՐԴԱՀԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЯЗЫКОЗНАНИЯ
Академии Наук
СССР

ԹԻՖԼԻՍ
Տպ. Կ. Թաղարիքիլաձէի-Դապալ. Ա. Մահտեսի-Յակոբեան
Սերդէսեանցայ փող. № 1.
1904

891.99
Շ-20

6005
19 NOV 2011
91.99
-20

ԽՈՐԻՆ ՇԱՀՄԱԶԵԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Թիֆլիս
Տպ. Թաարթքիլաձէի, Դպրոց. Ա. Մահտեսի-Յակոբեան
Սերգէևսկայա փող. № 1.
1904

46952

Дозв. цензурою 10-го Декабря 1904 г. г. Тифлисъ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՌ-Արմ ՍՍՌ
Ա. ՄՅԱՍ. ԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
КМ. А. МЯСНИКЯНА

58898-67

ՎԱՐԴՈՒՀԻ

Երբ խօսք բացուէր տիկին Վարդուհու մասին, ամենքն էլ կսկսէին բամբասել։ Ընդհանուրի կարծիքը նրա բարոյականի մասին վատ էր։

Վաղուցուայ հարեւաններ էինք, բայց նրա վատ կողմը չէինք տեսել. ամենքը խօսում էին, բամբասում էին, առանց փաստերի մինչև կախաղանի արժան համարում։

Շատ անգամ մտածում էի թէ Վարդուհին իսկապէս արժանի է այդ բամբասանքին։

Բայց չնայած որ տիկինը քարկոծւում էր իւր բացակայութեան ժամանակ, նոյնչափ էլ յարգւում էր երբ ինքը ներկայ էր լինում. այնպէս որ չէր կարելի հաւատալ որ դա այն արհամարհւած, ստուած կինն է։

Տիկին Վարդուհին հազիւ կը լինէր 22—23 տարեկան. շատ գեղեցիկ էր, գրաւիչ և դուրեկան. իսկ 50—55 տարեկան

ամուսինը թառամած դէմքով, մազերը սպիտակած, թուլակազմ, կեանքի վայելքներից յաղեցած մի ծերուկ էր, կնոջը բոլորովին անհամապատասխան։

Երիտասարդ տիկինը որ դատապարտուած էր կեանքի ծաղիկ հասակում կենդանի ամուսնու շուաքի տակ որպէս այրի ապրել, դատապարտուում, բամբասում էր ամուսնուն անհաւատարիմ լինելու համար։

Ուստայ Թաթոսը (այսպէս էին կոչում Վարդուհու ամուսնուն) հաղիւ էր կարողանում օրական մի թեթև ապրուստ հայթհայթել, պահել կնոջը և 6—7 տարեկան որդուն, որը աւելի ծանր բեռ էր դառնում շուտ շուտ հիւանդանալով։ Բայց Աստուած մի արասցէ եթէ ինքը ուստայ Թաթոսը հիւանդանար, միքանի օրով տանը մնար, ընտանիքը բոլորովին կըկորչէր չքաւորութեան ճանկերում։ Տան մէջ չունէին աչքի ընկնող ոչ մի թանկագին իրեղէն. Վարդուհին էլ վաղուց զրկուած էր ունեցած ոսկեղէն միքանի զարդերից, որոնց, կեանքի ձախորդ օրերին ծախսել էր ամուսինը։

Ուստայ Թաթոսը արհեստով կօշկակար էր։

Հօր կենդանութեան ժամանակ Ա... քաղաքում երբ բոլոր չորս եղբայրներն էլ միասին էին, ամենքն էլ լաւ յաջողութիւն ունէին գործի մէջ։ Հայրը մեռաւ, բոլոր եղբայրներն էլ բաժանուելով ամենքը մի մի կողմ գնացին և հայրական օջախը քայքայուեցաւ։ Ուստայ Թաթոսն էլ գաղթեց Թիֆլիս։ Թիֆլիսում, որպէս մեծ քաղաք, ուր աւելի լիքն են բախտախնդիր մարդիկ, նա չըդտաւ իւր սպասածը. այստեղ մի թեթև ապրուստ էր միայն, և եթէ կար մխիթարական մէկ բան, այդ էլ այն էր, որ գոնէ ապրում էին մեծ և զովուած քաղաքում։

Ֆոնդները միշտ պատրաստ են գաւակի համար ամեն զոհողութիւն անելու, միայն թէ նոցա բախտաւոր և երջանկացած տեսնեն. այդպէս էլ ուստայ Թաթոսը և տիկին Վարդուհին էին։ Որդին մեծանում էր. Թիֆլիսում կան շատ ուսումնարաններ, կաշխատեն մի տեղ կտան, գոնէ նրա ապագան լաւ կը լինի։

Ուստայ Թաթոսը Թիֆլիս գաղթած առաջին տարին շատ նեղութիւններ քաշեց, մինչև լաւ ծանօթացաւ քաղաքին, ճանաչեց մարդկանց և հաստատուն դործ ճարեց մէկ արհեստանոցում։ Նրա վարձած բնակարանը ամսական 3 ռուբլիանոց մի սենեակ էր, որտեղ 4—5 տարի բնակւում էին սեպհական տան պէս։ Վաղ առաւօտեան ուստայ Թաթոսը գնում էր դործի և ուշ երեկոյին վերադառնում տուն։

Տիկին Վարդուհին մնալով տանը փոքրիկ որդու հետ, որը աւելի դուրս էր վազզում հասակակից ընկերների հետ խաղալու, ինքն էլ մենակութիւնից չձանձրանալու համար գնում էր հարևաններից մէկի տունը, կամ նոցանից էին գալիս իւր մօտ իրենց ձեռագործներով միասին աշխատելու և խօսելու։

Որպէս մօտիկ հարևան մենք էլ միշտ երթ ու դալ ունէինք իրար տուն։ Ես գնում էի մեծ մասամբ երեկոները, երբ դործից վերադառնում էր ամուսինը։

Դա մի խիստ կրօնամոլ մարդ էր, ծերունուն յատուկ բնաւորութեամբ խիստ

հետաքրքրող, շատախօս, ջղային և միշտ բարկացկոտ։ Շատ սիրում էր ճառել աստուածաբանութիւնից, ջերմեռանդ հաւատացող էր Սուրբ Գրքին, դրախտին, դժոխքին, հանդերձեալ կեանքին և եղած չեղած սրբերի ու ճգնաւորների զօրութեանը։ Անտանելի էր դառնում նրա դրութիւնը, երբ յայտնում էին մի նոր կարծիք, նոր պարզուած հարց որ հակառակ էր իւր սկզբունքին։ Ուստայ Թաթոսը նոր սերնդին, եերիտասարդութեանը, կոչում էր անհաւատներ, ներկայ ուսումը համարում էր փչացնող, լկտիացնող։

«Ի՞նչ էք դուք, ինչ է ձեր ուումը և կարդացածը», ասում էր նա, «հինգ, տասը տարի կորցնում էք, քաշ էք գալիս ուսումնարաններում և ոչ մի աղօթք, շարական, սաղմոս չգիտէք, սրբազան պատմութիւնից ոչ մի նուրբ տեղեկութիւն, վարք սրբոցից նոյնպէս, մէկ խօսքով ոչ մի Աստուածահաճոյ նիւթ չկայ ձեր գլխում. ձեր ուղեղը այժմ բթացնում են հազար տեսակ ցնդի սատանայական գիտութիւնների մասին խօսելով. միշտ կարդում

էք տեսակ տեսակ փչացնող սիրահարութիւն, շնութիւն, անաստուածութիւն սովորեցնող գրքեր։ Հիմայ ամեն բան, ամեն սրբութիւն մասխարութիւն դառուցին, ոչ հաւատ մնաց, ոչ էլ սէր, և այդ նորելուկ անաստուած մարդոց փչացած խելքի դուրս տուածներից Աստուած էլ բարկացաւ մեզ վրայ և ներկայումս ապրուստը օրստօրէ դժուարանում է»։

Պատահում էր շատ անգամ, ես վիճում էի ուստա Թաթոսի հետ և մեր վէճերին երբեմն մասնակցում էր տիկին Վարդուհին։ Նա ամուսնու պէս նախապաշարուած չէր և այդ պատճառով պատահում էր որ մեր վիճաբանութիւնը վերջանում էր նրանով, որ ուստայ Թաթոսը սաստիկ կատաղում, բարկանում էր կնոջ թերահաւատ լինելու համար։

Վարդուհին դեռ փոքրահասակ, այսինքն 14 տարին չլրացած ընկել էր Թաթոսի ձեռքը և մեծացել նրա մօտ, այնպէս որ նա, կնոջ վրայ աւելի մի հօր տրպաւորութիւն և նշանակութիւն ունէր քան թէ ամուսնու։

Ամուսնու բարկացած ժամանակ կինը հլու հնազանդ զաւակի պէս միշտ լռում էր։

Ուստայ Թաթոսը որպէս հին մարդ, հնապաշտ էր և խիստ պատուաստէր։ Նրա համար անտանելի էր երբ կանայք գնում էին փողոց բաց երեսով, խօսում են օտար տղամարդու հետ և սարսափելի հակառակ էր նորաձևութեանը։ «Հնութիւն, հնութիւն», ասում էր նա, «ինչ որ կայ սուրբ և գնահատելի, այդ միայն հների, հնութեան մէջ պէտք է որոնել»։ Ահա այդպիսի ամուսնու ձեռքին էր տիկին Վարդուհին, որին բարբասում էր հասարակութիւնը որպէս մի փչացած անբարոյական կնոջ։

Ուստայ Թաթոսը որքան որ նախապաշարուած և պատուախնդիր էր ու շատ անգամ լսում էր կնոջ մասին անպատշաճ խօսքեր, բայց երբէք նշանակութիւն չէր տալիս, որովհետև 7—8 տարուայ փորձով շատ լաւ համարում ունէր երիտասարդ կնոջ անսահման հաւատարմութեան վրայ։

Ի՞նչն էր տեղի տուել ժողովրդին տիկին Վարդուհու մասին մի այդպիսի կար-

ծիք կազմելու երբ ոչ ոք չէր յանդգնի ե-
րես առ երես նրան մի վատ խօսք ասել
և հաստատել փաստով։

Հասարակութեան կարծիքը կազմւած
էր այն պատճառով միայն, որ Վարդու-
հու ամուսինը արդէն մի ծերուկ է դիպած
դադրած, կեանքից համարեայ լիացած,
թուլացած, իսկ կինը կեանքի շէմքին նոր
ոտք դրած կրակոտ մի կին, ապրելու տեն-
չը սրտին։

Տիկին Վարդուհուն շատ հետևողներ
կային. ինքս շատերի ախ ու վախը լսել
եմ նրան ձեռք բերելու, օգտելու համար,
բայց ոչ մէկը չէ ասել թէ կարողացել է
հասնել իւր նպատակին։

Վարդուհին որտեղ և ինչ շրջանի մէջ
ուզում է գտնուէր, միշտ սիրելի պէտք է
դառնար ամենքին։ Բնաւորութեամբ շատ
բարի և խոնարհ էր, իսկ գեղեցկութեան
կողմից էլ շատերի հետ կըմրցէր։

Շատ ընդունակ և շնորհքով էլ էր
նա. հմուտ գիտէր միքանի տեսակ նուրբ
ձեռագործներ։

Դանայք նախանձում էին ընութեան

այդ ստեղծագործութեան վրայ որ վարձա-
տրւած էր ամեն բնատուր բարիքներով.
բայց երբ նայում էին նրա ամուսնուն,
սրտերը մի քիչ ուրախանում էր որ այդ
չքնաղ կինը գնահատուած չէ և ընկած է
այդ ծերուկի ձեռքը։

Շատ տղամարդիք էլ կատաղում էին
թէ ինչու այդ չքնաղ կինը օր առաջ չէ
թողնում ծերուկ ամուսնուն և ապրում օ-
տարի հետ։

Երկար ժամանակուայ ընթացքում
լաւ մտերմացանք այդ հարևաններիս հետ։
Շատ անգամ ընտանեկան խօսակցութեան
ժամանակ երբ խօսք էր լինում Վարդու-
հուն բամբասելու մասին, ինքը այսպէս էր
ասում—

«Ես գիտեմ որ շատերը ինձ ճանա-
չում են որպէս մի փչացած կնոջ. ինձ լաւ
յայտնի է որ բոլոր բարեկամներս բամբա-
սում են ինձ, արիւնակից բարեկամներիս
հետ խօսելուս, մանգալուս համար անգամ,
բայց յոյս ունեմ որ ամենքն էլ մի օր պի-
տի զղջան և ամաչեն։ Դուք ինչ էք կար-
ծում, եթէ ամուսինս լինէր մի երիտա-

սարդ՝ ինձ համապատասխան ընկեր, մի-թէ մարդիկ ինձ կ'բամբասէին, մի-թէ մէկը իրան թոյլ կտար ինձ համար հոգին սե-ւացնելու երեսիս անտեղի զուր ու մուր քսելով. բայց քանի որ բաղդս այսպէս է, ամուսինս մի թոյլ արարած է, պարզ բան է, ամենքն էլ պիտի քցցէն ինձի: Ամու-սինս ծերացած ու խեղճ, իսկ ես երիտա-սարդ և գեղեցիկ, որ տեսնողը պիտի հա-ւատայ թէ ես կարող եմ հաւատարիմ լի-նել մարդուս: Թող ամենքն էլ բամբասեն, միայն թէ ես գիտենամ ինձ, թող խղճիս մօտ յանցաւոր չըլինեմ, թող խիղճս ինձ չըտանջէ, օտարի ստոր բամբասանքը ոչինչ եմ համարում և նշանակութիւն էլ չեմ տալ երբ ինձ անպարտ եմ զգում դէպի այդ մեղադրանքները»:

Եւ այդ խօսքերը կարելի էր շատ անգամ լսել տիկին Վարդուհուց:

Բայց չէր կարելի ասել թէ տիկինը դժգոհ չէր վիճակից. նա միշտ անիծում էր իւր անհամապատասխան ամուսնու-թեան պատճառ եղողներին:

Դժբախտ կինը ծաղիկ հասակում

մեռցրել էր իւր մէջ ամուսնական սիրո զգացմունքը և բոլոր սիրոյ զրգիռը կենդ-ռոնացրել մի հատիկ որդու վրայ: Մի ժամ չէր կարող առանց նրան տեսնելու մնալ. բոլոր հարևանները և ծանօթները շատ անգամ տեսել էին թէ ինչպէս նա 6—7 տարեկան որդուն զրկած փոքրիկ երեխայի պէս համբոյրներով ծածկում էր և ձեռ-քովը կերակրում:

Տիկին Վարդուհու բնաւորութեան մէկ լաւ յատկութիւնն էլ այն էր, որ վրէժ-խնդրութիւն և թշնամանալ չգիտէր: Ե-լեսին հազար անգամ վատ խօսող, կռւող հարևանը երբ նեղ տեղն էր լինում, կա-րօտ ուրիշի օգնութեանը, նա ամեն ինչ մոռացած, մաքուր սրտով վազում էր նրա հաւարին հասնելու, ձեռքից գալածի չափ օգնելու:

Ահա այդ կնոջը բամբասում էր հա-սարակութիւնը, համարելով նրան որպէս մի փչացած, անհաւատարիմ, անբարոյա-կան կին:

Ո՞վ էր հետևել նրան, ով էր բռնել յանցանքի տեղում:

Ոչ ոք:

Ապացուցուած է, որ երբ ժողովրդի մէջ մի խօսք նետուեց, «բերնից բերան, կ'դառնայ դերան» կ'լինի, լինի այդ լուրը սխալ կամ ուղիղ։ Շուտով լուրի իսկական աղբիւրը կորչում է և ամեն մէկը իմացածը իւր ընդունակութեան չափով սկսում է շարադրել, ծաղկեցնել և տարածել ամեն տեղ։

Այսպէս էլ ընկել էր Վարդուհու անունը ժողովրդի բերանը։ Նա շատ բաներ մի լսում, բայց ո՞ւմ բերանը կարող է բռնել։ Հատ անգամ նա լաց լինելով ասում էր թէ ինքը ինչո՞ւ այն չէ ինչ որ կարծում է հասարակութիւնը, ինչո՞ւ Աստուած չէ տուել իրան այնպիսի մի սիրտ որ երբ հասարակութիւնը ասում է, դիմացն էլ կայ լայն ասպարէզ, ինչո՞ւ չգընալ նրա ցոյց տուած ճանապարհով։ «Բայց չէ, աւելացնում էր նա, քանի որ կեանքս ու բաղդս փոքր հասակիցս թունաւորուեց, ես այլ և այլ չեմ սպասում մարդկանցից բարիք և չեմ էլ հաւատում անկեղծութեանն ու ճշմարտութեանը։ Ես մինչև օրս էլ չեմ հասկանալ թէ ինչը ստիպեց հօրս, որ ինձ

կնութեան տուեց իր հասակակից մէկ մարդու, իմ այն հասակումս, երբ ես դեռ ոչինչ չգիտէի. բայց նա այդպէս վարուեց և այն օրուանից իմ կեանքն ու բաղդը սև շրջանակի մէջ դրեց։ Տասն և հինգ տարեկան էի, երբ առաջին երեխայիս ծընեցայ՝ մի փոքրիկ, նիհար արարած, շատ ծանր չարչարանքներով մեծացրի, միշտ զբաղուած էի նրանով և ուխտեցի նրան էլ նուիրուել ամբողջ սրտով։ Յետոյ ունեցայ 2 երեխաներ ևս, որոնք շուտով մեռան ու իմ սէրս փոքրիկ որդուս վրայ աւելի և աւելի կրկնապատկուեց. աշխարհիս վրայ բացի նրանից ուրիշ ոչինչ չունիմ և ոչինչ էլ չէ գրաւում ինձ»։

Պատահել է ինձ տեսնել տիկնոջ մօտ այնպիսի նամակներ, որոնք ուղղուած են եղել զանազան անձնաւորութիւնների (նոյն իսկ ամուսնացած և զաւակների տէր մարդկանցից) որ առաջարկել են Վարդուհուն փող, ոսկի, հարստութիւն, ապահովութիւն, միայն թէ ինքը բաժանուի ամուսնուց կամ թէ չէ զաղտնի կերպով դառնայ իրանց սիրուհի։ Վարդուհին միշտ

զանազան միջոցներով ուղարկուած այդ նամակների վրայ ծիծաղում էր և շատ անգամ տալիս ամուսնուն որ կարդայ։

«Չը գիտեմ», ասում էր նա, «վերջս ինչ է լինելու, բայց՝ եթէ շուտ մեռայ՝ արդէն բոլորովին կազատուեմ բամբասանքներից, իսկ թէ ամուսինս գլուխը վայր դնէ, միայն այն ժամանակ, երբ ոչ մի միջոց չպիտի ունենամ ապրելու, գլխաւորապէս որդուս համար, գուցէ ստիպուած պէտք է դիմեմ երկրորդ անգամ օրինաւոր ամուսնութեան, բայց այդ էլ դեռ ապագայի հարց է որ ասում եմ և չգիտեմ...»։

Այո, այդ էլ ապագայի հարց էր, որ տիկին Վարդուհին չըգիտէր. բայց նա ապրում էր, ինչպէս նկարագրեցինք խակական դրութիւնը, ապրում էր հասարակութեան աչքից ընկած, որպէս մի փչացած կին։

Հասարակութիւնը բամբասում է նրան բոլորովին լիզուր տեղը։

Արդեօք ինչու՞ չպէտք է կարծել որ տիկին Վարդուհու նման անտեղի բամբասանքի առարկայ են շատ շատերը։

ՀՍՍՌ-Ական ԵՍՓ

ՀՀ Ազգային գրադարան
NL0352895

46 952